



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17020

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հուլիսի 27-ի թիվ 120-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/71-Ա ՓԱՍՏԱԲԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Սուսաննա Սարգսյանին (արտոնագիր թիվ 1536) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Քաղաքացի Արման Համբարձումյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ՝ հայտնել է, որ իր և ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ «Ալգա» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Սուսաննա Սարգսյանի (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) հետ 18.03.2015թ-ին կնքվել է իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիր (**այսուհետ նաև՝ Պայմանագիր**), որով փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը դատարաններում և իրականացնել քրեական գործերի վարում նախաքննության և դատաքննության ընթացքում: Ըստ Դիմողի փաստաբան Ս. Սարգսյանն իրեն և իր մտերիմ շրջապատի անձանց խոստացել է որ իր իրավախորհրդատվական գործունեությամբ կհասնի իրավապահ և դատական մարմինների կողմից հոգուտ Դիմողի կայացվող որոշումների և խնդիրը կլուծվի:

Դիմողը նշել է, որ ինքը հետագայում է հասկացել, որ իր և փաստաբանի միջև 18.03.2015թ.կնքված պայմանագրով սահմանված չեն կոնկրետ պարտավորություններ:

Ըստ Դիմողի 18.03.2015թ. կնքված պայմանագրում միայն նշված է հոնորարի ընդհանուր չափը՝ 1.455.000 ՀՀ դրամ, որից հստակ չի երևում, թե դրանից որքանն է հանդիսանում քաղաքացիական, որքանը քրեական (նախաքննության և դատաքննության փուլերի) գործերի համար: Դեռ ավելին նշված չէ նաև վճարման կարգը և պայմանագիրը գրված է ոչ առարկայական:

Դիմողը նշել է, որ թիվ ԵԱԲԴ/2443/02/15 քաղաքացիական գործով ներգրավվել է

որպես պատասխանող և դատաքննության օրվա մասին տեղյակ է պահել Սուսաննա Սարգսյանին, սակայն վերջինս դատաքննությանը չի ներկայացել, չի հայտնել Դիմողի դիրքորոշումը հայցի վերաբերյալ, և դատարանը ձևակերպել է, որ գործը քննվում է պատասխանողի բացակայությամբ: Նշվածով Դիմողը հիմնավորում է փաստաբանի կողմից իր պարտականությունները չկատարելու հանգամանքը:

Դիմողը հայտնել է նաև, որ իրավախորհրդատվության շրջանակներում ուսումնասիրելով բանկի և Դիմողի հետ առնչվող հարաբերությունները՝ Սուսաննա Սարգսյանն իրեն հավաստիացրել է, որ Արմինե Համբարձումյանի և բանկի միջև եղած իրավահարաբերությունների լուծումը կնպաստի բանկի ապօրինի գործողությունները չեզոքացնելու համար և կազմել և տրամադրել է բողոք-դիմում իրավապահ մարմիններին ներկայացնելու համար: Ըստ Դիմողի, ինքը, բարեկամների հետ ծանոթանալով դիմումին, հասկացել է, որ փաստաբանը զբաղված է տարբեր սուբյեկտների նկատմամբ զրպարտչական նյութեր ստեղծելով, ուստի այդ դիմումը Դիմողի քույրը որևէ մարմնի չի ներկայացրել:

Դիմողը, կցելով իր կողմից փաստաբանին ուղղված 15.06.2016թ-ի և 27.06.2016թ-ի դիմումների և փաստաբանի կողմից նշված դիմումներին որպես պատասխան ուղարկված գրությունների պատճենները, հայտնել է, որ դիմելով փաստաբանին խնդրել է իրեն վերադարձնել իր կողմից վերջինիս վճարված գումարները, որին սակայն փաստաբանը պատասխանել է, որ հայցադիմումին պատասխան չի ներկայացվել Դիմողի ցանկությամբ, քանի որ վերջինս գտել է, որ հայցը հիմնավոր է և բացի այդ պատասխան ներկայացնելով՝ ցուցմունք կտա իր աներորդու դեմ:

Ըստ Դիմողի փաստաբանի կողմից հայցադիմումին պատասխան չներկայացնելը լուրջ վնաս է պատճառել իրեն, քանի որ դատարանը դա դիտել է որպես Դիմողի կողմից հայցադիմումի պահանջների ընդունում և բավարարել է հայցը:

Դիմողը հայտնել է, որ փաստաբանն իրեն թելադրել է դիմումներ, որ իբր Դիմողը հանդիսանում է Մհեր Պետրոսյանի խարդախությունների զոհը և դրդել է սուտ ցուցմունքներ տալ վերջինիս դեմ, սակայն Դիմողը, հասկանալով, որ դրանք զրպարտություններ են, և որ այն պնդելու դեպքում կվերաձվի ակնհայտ սուտ մատնողի, հետագայում հրաժարվել է այդ դիմումներից:

Դիմողը հայտնել է նաև, որ Սուսաննա Սարգսյանն իր շահերը ներկայացնելուն զուգահեռ հանդիսացել է նաև տուժողներ Օ.Մարկարյանի, Գարիկ Իսրայելյանի, Միքայել Ալկամյանի և Ռուբեն Շահինյանի ներկայացուցիչն այն քրեական գործով, որով որպես մեղադրյալ ներգրավված է եղել Դիմողի աներորդին՝ Մհեր Պետրոսյանը:

Ըստ Դիմողի, փաստաբանը, ներկայացնելով մյուս վստահորդների շահերը, ունեցել է տեղեկություններ և փաստաթղթեր, որոնցով պարզ է եղել, որ Դիմողի պահանջը պետք է ուղղվի հենց այդ անձանց դեմ: Դիմողը պնդում է, որ փաստաբանն իրավաբանական խաբեբայությամբ իր պահանջը քաղաքացիական օրենսդրության մասով չի ներկայացրել, իսկ քրեական մասով ապօրինի մեկնաբանություններով ուղղորդել է ի շահ իր մյուս վստահորդների:

Ըստ Դիմողի շահերի հակասություն է եղել իր և Օ. Մարկարյանի շահերի միջև, քանի որ ինքը չի ցանկացել ցուցմունքներ տալ ի օգուտ Օ. Մարկարյանի իր աներորդու դեմ:

Դիմողը նշել է, որ փաստաբան Ս. Սարգսյանը, փաստորեն խախտելով նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.6, 3.2.2, 3.2.4 և 3.2.9 կետերը, ինքն անձամբ է Դիմողի իրական պահանջներին հաղորդել ակնհայտ ապօրինի բնույթ՝ նույն իրավահարաբերությունները շրջանակներում այլ վստահորդների հետ ունեցած

պայմանագրերի առարկաների շուրջ ունեցել է Դիմողի շահերից էականորեն տարբերվող ինքնուրույն շահ, հոգուտ իր և մյուս վատահորդների շահերի օգտին է օգտագործել Դիմողի միջոցով ստացած տեղեկատվությունն ու ապացույցները՝ իրականում Դիմողին պատճառելով խոշոր վնասներ:

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ փաստաբան Սուսաննա Սարգսյանի նկատմամբ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 23.03.2017թ. թիվ 71-Ա/ԿԳ-17020 որոշմամբ՝

- Փաստաբան Սուսաննա Սարգսյանի (արտոնագիր թիվ 1536) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 3.1.10 ենթակետի խախտման հատկանիշներով.

- Ծառայության մատուցման մասին պայմանագիրը թերի և ոչ առարկայական կազմված լինելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վաղեմության ժամկետն անցնելու հիմքով.

- Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու և Դիմողին նախաքննության ընթացքում զրպարտչական և սուտ ցուցմունքներ տալուն դրդելու, Պատասխանողի կողմից Դիմողի և այլ անձանց շահերի միջև հակասության առկայության պայմաններում վերջիններիս ներկայացուցչությունն իրականացնելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառով:

27.03.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գոհար Հովհաննիսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

25.04.2017թ. Դիմողը ներկայացրել է բացատրություն, որտեղ մասնավորապես նշել է, որ դիմել է Պատասխանողին «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում վարկերի հետ կապված իրավական խնդիրների լուծման համար: Պատասխանողին վճարել է 2250 ԱՄՆ դոլար: Փաստաբան Սուսաննա Սարգսյանի հետ պայմանագիրը կնքելու ընթացքում բանավոր խոսակցությունների ժամանակ բանկային գործերով դրական արդյունք տալու մասին բազմիցս խոստում են տվել Սուսաննա Սարգսյանը և Ա. Գալստյանը: Սուսաննա Սարգսյանը այդ խոստումը տվել է այն անձանց ներկայությամբ, որոնց շահերը պաշտպանում է առ այսօր: Դիմողը նշել է նաև, որ չի դիմել Պալատ, քանի որ հույս է ունեցել մարդկային ձևով հարցին ընթացք կտրվի: Հերթական հանդիպման ժամանակ իրեն ասվել է, որ Ա. Գալստյանի խափանման միջոցը կփոխարինվի և հարցին լուծում կտրվի, բայց մինչ օրս չի լուծվել:

19.04.2017թ. Դիմողը ներկայացրել է միջնորդություն, որով ըստ էության խնդրել է կարգապահական վարույթ հարուցել փաստաբան Սուսաննա Սարգսյանի նկատմամբ

վերջինիս վերագրվող այն նույն արարքների համար, որոնց վերաբերյալ արդեն իսկ որոշում է կայացվել: Նշված միջնորդությամբ Դիմողը միջնորդել է հարուցված կարգապահական վարույթին մասնակից դարձնել Ծովինար Պետրոսյանին:

08.06.2017թ. Դիմողը ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է, որ Պատասխանողը խախտել է Կանոնագրքի 3.1.10 կետը, իսկ Պատասխանողի այն պնդումը, որ «ինքը միայն ասել է, որ կստանան այնպիսի ծառայություն, որում թրություններ չեն հայտնաբերվի» իրականությանը չի համապատասխանում: Թերությունները բազմազան են և հետևանքային:

Խորհրդի նիստին ներկայացել են Դիմողը և իր ներկայացուցիչ Ծովինար Պետրոսյանը և պնդել են դիմումում և իրենց կողմից հետագայում ներկայացված դիրքորոշումներում ներկայացված հանգամանքները:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Փաստաբան Սուսաննա Սարգսյանը 14.03.2017թ. ներկայացրել է գրավոր բացատրություն, որտեղ նշել է, որ դիմումն ամբողջությամբ հիմնազուրկ է, դրանում արտահայտված մտքերը զուրկ են որևէ տրամաբանությունից, դիմումատուն հակասում է ինքն իրեն և հենց դիմումի բովանդակությունից ակնհայտ է, որ Դիմողը միայն մի նպատակ է հետապնդել, որքան հնարավոր է սուր արտահայտություններ անել, փորձելով դրանք համապատասխանեցնել փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտմանը:

Ըստ փաստաբանի Արման Համբարձումյանի հետ պայմանագիրը կնքվել է քննարկման արդյունքում և նրա ցանկությամբ մատուցվող ծառայությունների բովանդակությունը մանրակրկիտ չի նշվել: Ըստ փաստաբանի Դիմողը քաջ գիտակցել է ինչ պայմանագիր է կնքում և ինչ բովանդակությամբ:

Փաստաբանը նշել է, որ Արման Համբարձումյանը դիմումում բարձրացված հարցերը բարձրաձայնել է նաև Մհեր Պետրոսյանի վերաբերյալ քննվող թիվ ԵԱՔԴ/0004/01/16 քրեական գործի քննության դատաքննության ընթացքում, փորձելով նման եղանակով նախաքննության և դատաքննության ընթացքում իր տված ցուցմունքների էական հակասությունները պատճառաբանել դրանք փաստաբանի կողմից թելադրված լինելու հիմքով:

Փաստաբանը նշում է նաև, որ Դիմումում մատնանշված նույնաբովանդակ դիրքորոշմամբ բողոքներ են ներկայացվել նաև Դիմողի աներորդու՝ Մհեր Պետրոսյանի կողմից փաստաբանի դեմ ներկայացված բազմաթիվ այլ բողոքներում, և նույնիսկ փորձ է արվել քրեական գործ հարուցել փաստաբանի նկատմամբ, սակայն նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Ըստ փաստաբանի դիմումում Արման Համբարձումյանի նշած անհեթեթ փաստարկներին (նկատի է ունեցել Մ. Պետրոսյանին նկատմամբ մեղադրանք առաջադրելը) իրավական գնահատական է տրվել ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչությունում քննված քրեական գործի շրջանակներում և այդ գործն այժմ քննվում է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում (քրեական գործ թիվ ԵԱՔԴ/0004/01/16):

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը նախաքննության ընթացքում մինչև փաստաբանի հետ պայմանագիր կնքելը, արդեն իսկ երեք անգամ՝ 30.10.2014թ-ին, 07.02.2015թ-ին և 03.03.2015թ-ին, իսկ 05.03.2015թ-ին նաև առերես հարցաքննությամբ մեղադրող բնույթի ցուցմունքներ է տվել Մհեր Պետրոսյանի դեմ: Ըստ փաստաբանի Դիմողը ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչության պետին ուղղված ձեռագիր գրված

դիմում է ներկայացրել նաև 02.04.2015թ-ին:

Փաստաբանը նշում է, որ անհասկանալի է, թե ինչ զրպարտական քնույթի դիմումների մասին է խոսքը, քանի որ իր կողմից փաստաբանական հարցումներ կատարվել են Դիմողի կողմից (ձեռագիր դիմումում և ցուցմունքներում) մատնանշված տվյալները պարզելու համար և ձեռքբերված ապացույցներն էլ ներկայացվել է նախաքննական մարմնին:

Ըստ փաստաբանի Արման Համբարձումյանի կողմից որպես զրպարտանք ներկայացված հանգամանքների մի մասի վերաբերյալ առկա է քննվող քրեական գործից մաս անջատելու և նախաքննությունը շարունակելու վերաբերյալ որոշում:

Փաստաբանը հայտնում է նաև, որ Դիմողին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Կ. Ուլենցու 59/5 18 հասցեի անշարժ գույքի հանցավոր ճանապարհով օտարման և նշված գործով Դիմողի պատասխանատվության ենթարկվելու մտավախությունը ճշտելու, Դիմողի կողմից տրված լիազորագրի հիման վրա Մեծ Պետրոսյանի կողմից այլ գործարքներ կատարած լինելու հանգամանքերը պարզելու համար է որ Դիմողը դիմել է փաստաբանի օգնությանը:

Փաստաբանը Դիմողի օգտին դատական ակտ կայացնելու խոստում տալու մասով նշել է, որ դրանով Դիմողը և Պետրոսյանների ընտանիքը նպատակ են հետապնդում իրականությանը չհամապատասխանող հայտարարություններով հասնել փաստաբանի նկատմամբ կարգապահական գործ հարուցելուն, քանի որ այլ ճանապարհներով քրեական գործ հարուցել այդպես էլ չստացվեց:

Փաստաբանը նշել է, որ Արման Համբարձումյանը իրեն դիմել է ամուսնալուծության և ք. Երևան, Կ. Ուլենցու 59/5 18 հասցեի անշարժ գույքը կեղծ փաստաթղթերով գրավից ազատված լինելու և այն վաճառելու խնդիրներով և քրեական գործով իրեն խորհրդատվություն մատուցելու համար: Այդ իսկ. պատճառով հետագա հարցաքննություններին Դիմողը մասնակցել է առանց փաստաբանի:

Պատասխանողը նախապատրաստող անձին ներկայացրել է բացատրություն, որտեղ մասնավորապես նշել է, որ իր նախկին վստահորդ Արման Համբարձումյանին երբևէ բարենպաստ դատական ակտի մասին խոստում չի տվել և ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքելու պահին որևէ դատական գործ չի եղել: Պատասխանողը նշել է, որ ինչպես իր մյուս վստահորդներին, այնպես էլ Ա. Համբարձումյանին ինքը միայն ասում է, որ կստանան այնպիսի ծառայություն, որում թերություններ չեն հայտնաբերի, որը որևէ կերպ չի վերաբերում գործի ելքին: Դիմողը նշել է, որ Դիմողի կողմից պայմանագրային հարաբերությունների պարզաբանման խնդիր առաջացել է իր հիշելով 2016թ. հունիս ամսից, մինչ նշված ժամանակահատվածը բազմիցս նրան հրավիրել է իր գրասենյակ ծառայությունների կատարման ակտ կազմելու համար: Պատասխանողը նշել է նաև, որ Պայմանագրում նշված գումարի վճարումները կատարվել են մասնակի, դրամոց, բանկային փոխանցման միջոցով:

29.06.2017թ. Պատասխանողը ներկայացրել է գրություն, որով խնդրել է կարգապահական գործով խորհրդի նիստը անցկացնել իր բացակայությամբ:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

26.05.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Գոհար

Հովհաննիսյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն վերջինս գտել է, որ իրավապահ և դատական մարմիններում հոգուտ Դիմողի որոշումների կայացման խոստում տալը Պատասխանողի կողմից ապացուցված չէ: Նախապատրաստող անձը նշել է նաև, որ, եթե Պատասխանողի այդ արարքը ապացուցված էլ լիներ, ապա այդ դեպքում էլ կգործեր օրենքով սահմանված վաղեմության ժամկետի դրույթները:

29.05.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հուլիսի 18-ին, ժամը՝ 18:30-ին, հուլիսի 27-ին, ժամը՝ 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Արման Համբարձումյանի և «Ալգա» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Սուսաննա Սարգսյանի միջև 18.03.2015թ. կնքվել է Ծառայությունների վճարովի մատուցման թիվ 15 պայմանագիրը, որով կատարողը պատվիրատուի ցանկությամբ պարտավորվում է ներկայացնել վերջինիս շահերը ՀՀ դատարաններում, վարել քրեական գործեր նախաքննության և դատաքննության ընթացքում: *Նշված փաստը հաստատվում է 18.03.2015թ. Ծառայությունների վճարովի մատուցման թիվ 15 պայմանագրով:*

2) Դիմողը դիմել է Պատասխանողին «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում ունեցած վարկերի հետ կապված իրավական խորհրդատվության համար: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 18.07.2017թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/412-17 տեղեկանքի համաձայն Սուսաննա Սարգսյանն արտոնագիրը ստացել է 14.07.2012թ.: Սուսաննա Սարգսյանի նկատմամբ 2012-2017թթ ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 2 կարգապահական վարույթ, որոնք Պալատի խորհրդի 05.09.2014թ. թիվ 140/1 և 25.07.2014թ. թիվ 124ԿԳ/1 որոշումներով կարճվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սուսաննա Սարգսյանի նկատմամբ Կանոնագրի 3.1.10 ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 3.1.10. ենթակետի համաձայն՝ փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: **Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:**

Վերլուծելով վերը նշված կանոնի պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե՛

- արդյո՞ք փաստաբան Սուսաննա Սարգսյանի կողմից իրավապահ և դատական մարմիններում քննվող գործերով հոգուտ Դիմողի որոշումների կայացման խոստում է տրվել, եթե այո ապա՝ ե՞րբ է տրվել փաստաբանի կողմից նման խոստում, և Դիմողի կողմից ե՞րբ է հայտնաբերվել փաստաբանի կողմից ենթադրյալ խախտում թույլ տալու փաստը:

Պատասխանողի կողմից Կանոնագրքի պահանջների խախտում թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Նման խախտումը կարող է իրականության մեջ օբյեկտիվորեն տեղ գտած լինել, դրանք հնարավոր են և ենթակա են ապացուցման, և համաձայն Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետև նաև՝ Կարգ**) 15-րդ հոդվածի 1-ին մասի, առ այն, որ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը:

Խորհրդի տրամադրության տակ առկա են Դիմողի ու Պատասխանողի դիրքորոշումներն արտահայտող բացատրությունները և Խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք հաստատեն փաստաբան Սուսաննա Սարգսյանի կողմից իրավապահ և դատական մարմիններում քննվող գործերով հոգուտ Դիմողի որոշումների կայացման խոստում տալու հանգամանքը:

Եվ համաձայն **Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝** *Եթե բոլոր ապացույցների հեղազուտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը*, տվյալ դեպքում Դիմողը:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուտ Պատասխանողի:*

Պատասխանողի կողմից իրավապահ և դատական մարմիններում քննվող գործերով հոգուտ Դիմողի որոշումների կայացման խոստում տալու հանգամանքը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պարագայում Պալատի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սուսաննա Սարգսյանի նկատմամբ Կանոնագրքի 3.1.10 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված

կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 23.03.2017 թվականի թիվ 71-Ա/ԿԳ-17020 որոշմամբ փաստաբան Սուսաննա Սարգսյանի (արտոնագիր թիվ 1536) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.10 ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան